«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Ա Վ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

Հետազոտության թեման՝ Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը

Առարկան՝ Մաթեմատիկա

Հետազոտող ուսուցիչ՝Գդոյան Տոնական

Ուսումնական հաստատություն՝Շղարշիկի Ա.Մինասյանի անվան միջնակարգ դպրոց

Երևան 2022

Նպատակը՝

1.Աստվածաշունչ Մատյանի մասին ծանուցում,

2.նրա ներգործուն ազդեցությունը հայ ազգի վրա,մշակութային առումով,

3.առակների,ասացվացքների միջոցով հասնել հացի բացահայտմանը(լուծմանը):

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աստվածաշունչը,որպես մի մատյան,գրվել է հազար և ավելի տարիների ընթացքում և քառասուն անձանց հեղինակությամբ:Բառացի Աստվածաշունչ նշանակում է Աստծո շնչով գրված:Աշխարհում միայն հայերն են,որ ճիշտ ձևով են վերնագրում մատյանը:Մյուս բոլոր ժողովուրդները օգտագործում են Բիբլիա անունը,որը հունարենից թարգմանաբար նշանակում է Գիրք:Աստվածաշունչը յոթանասունհինգի(75) գրքերի մի ամբողջություն է:Այն պատմում է Աստծու և մարդու հարաբերությունների մասին:Աստվածաշունչը կամ Սուրբ գիրքը բաղկացած է երկու մասից.

1. Հին Կտակարան կամ Հին ՈՒխտ,
2. Նոր Կտակարան կամ Նոր ՈՒխտ:

Կտակարան՝նշանակում է ՈՒխտի կամ Դաշինքի վավերագիր:

Հին Կտակարանը Աստծու և Իսրայելի միջև կնքված դաշինքի վավերագիրն է,որտեղ խոսվում է Աստծու և նրա ընտրյալ ժողովրդի՝Իսրայելի հարաբերությունների մասին՝աշխարհի արարչագործությունից մինչև Հիսուս Քրիստոս:

Նոր Կտակարանը վավերագիրն է Աստծու և համայն մարդկության միջև դաշինքի,որը կնքվեց Հիսուս Քրիստոսի միջոցով:Այնտեղ խոսվում է Հիսուս Քրիստոսի առաքելության մասին:Նրա շնորհիվ Աստծու ընտրյալ ժողովուրդ դարձան բոլոր ազգերը՝անկախ մաշկի գույնից,ռասայից,լեզվից և բնակավայրից:

Ըստ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու կանոնի,այսինքն ընդունված գրքերի ցանկի,Հին Կտակարանն ունի 48 գիրք:Այդ գրքերը խմբավորվում են հետևյալ կերպ.

.ա.Հնգամատյան կամ Օրենք-5 գիրք,

բ.Պատմական գրքեր– 18 գիրք,

գ.Բանաստեղծական-իմաստասիրական գրքեր-8 գիրք,

դ.Մարգարեական գրքեր-17 գիրք:

Նոր Կտակարանը 27 գրքերի ժողովածու է:Նա ներկայացնում է այն Նոր ՈՒխտը,որ Հիսուս Քրիստոսի արյունով կնքվեց Աստծու և ողջ մարդկության միջև՝մարդկանց փրկության համար:Այդ 27 գրքերը գրվել են տարբեր ժամանակներում և տարբեր ծավալներով:Դրանք ներկայացնում են քրիստոնեական եկեղեցին,որը հիմնադրեց Հիսուս Քրիստոսը և իր ծննդից սկսաց մինչև եկեղեցու տարածումը,ինչպես նաև հավատացյալների կյանքը տարբեր երկրներում:

Ներկայումս այդ գրքերն իրենց դասավորումով այսպիսին են.

1.Ավետարաններ(Մատթեոս,Մարկոս,Ղուկաս,Հովհաննես),որոնք պատմում են Հիսուսի կյանքն ու նրա քարոզչությունը,

2.Առաքյալների գործերը,որ 1-ին դարի եկեղեցու կյանքն է,

3.Նամակներ,որոնք բաժանվում են (2) խմբի՝

ա)Պողոս առաքյալի կողմից գրված նամակներ,ընդանենը 14 նամակ՝ուղղված Հռոմեացիներին,Կոբնթացիներին (Ա և Բ),Գաղատացիներին,Եփեսացիներին, Փիլիպոլեցիներին,Կողոսացիներին,Թեսաղոնիկեցիներին(Ա և Բ),Տիմոթեոսին(Ա և Բ),Տիտոսին,Փիլիմոնին և Եբրայեցիներին,

բ)Ընդհանրական նամակներ,ընդամենը յոթ(7),որոնք գրվել են Հակոբոսի,Պետրոս առաքյալի (Ա և Բ),Հովհաննես առաքյալի(Ա,Բ,Գ) և Հուդայի կողմից,

4.Հայտնություն(Հովհաննեսի),որը պատմում է հայտնութենական տեսիլքով բարու վերջնական հաղթանակը չարի դեմ և Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը:

Որպեսզի ժողովրդի համար Իր խոսքն ավելի հասկանալի լինի,Հիսուսը առակներով էր խոսում:

ԱՍՏՎԱԾԱԾՆՉՅԱՆ ԱՌԱԿՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Առակը ուսուցման ձև է:Այդ ժամանակ ուկնդիրը բարոյական և կրոնական ճշմարտությունները յուրացնում է հետաքրքիր պարզաբանումներով:
Առակ բառն առաջացել է հունարեն պարաբոլե բառից և իր նշանակությամբ նման է այլաբանություն բառին:Ինչպես առակը,այլաբանությունն ու փոխաբերությունը նույնպես ուսուցման ձև են:
Կարելի՞ է օրինակ տարբերակել աշխարհիկ՝օրինակ Հովհաննես Շիրազի <<Առակս զի՞նչ ցուցանե>>,և ավետարանական առակների միջև:Ըստ իս ոչ, քանի որ երկուսն էլ ունեն նույն նպատակը՝ուսուցանել,հասկացնել,խրատել, բացատրել…
Առակները գրվել են արձակ և չափածո ժանրերով:
Ավետարանական առակը սահմանվել է իբրև երկրային պատմություն՝ երկնային իմաստով:Երկրային պատմությունների հեղինակի՝Հիսուսի,ժողովրդի հետ առակներով խոսելու մեջ մեծ սկզբունք կա:Նույն օրենքները կիրառվում են թե՛ բնական թե՛ հոգևոր աշխարհի նկատմամբ:Հիսուսը տեսնում է այդ երկուսի միասնությունը:Հիսուսի առակները և՛ կանոններ են և՛ ուղերձներ և՛ խրատներ, Աստծո արքայություն մտնելու լուր,խոսք:
Իր նպատակը մեկն էր՝օգնել մարդկանց աշխարհը նորովի ընկալելու:
Հիսուսը խոսելով երկնքի արքայության մասին,առակներով է բանաձևում իր միտքը:
1.Երկնքի արքայությունը նման է մանանեխի հատիկի,երբ մի մարդ առնելով այն,ցանում է իր արտի մեջ:Այն փոքր է մյուս սերմերից,բայց երբ աճում է,բոլոր բույսերից ավելի է մեծանում,ծառ է դառնում և տալիս է այնքան մեծ ճյուղեր,որ երկնքի թռչունները գալիս են և հանգստանում նրա ճյուղերի վրա:
2.Թթխմորի նման է երկնքի արքայությունը,երբ մի կին այն դրեց երեք չափ ալյուրի մեջ,մինչև որմ ամբողջը խմորվեց:
3.Երկնքի արքայությունը նման է արտի մեջ թաքնված գանձի,երբ մի մարդ այն գտավ,նորից թաքցրեց և ուրախությունից գնաց վաճառեց իր ամբողջ ունեցվածքը և գնեց այդ արտը:

4.Երկնքի արքայությունը նման է մի վաճառականի,որ գեղեցիկ մարգարիտներ էր որոնում:Նա մի թանկարժեք մարգարիտ գտնելով՝գնաց վաճառեց իր ամբողջ ունեցվածքը և գնեց այդ մարգարիտը:
5.Երկնքի արքայությունը նման է ծովը նետված ուռկանի,որի մեջ տարբեր բաներ է հավաքվում:Երբ լցվում է,այն ցամաք հանելով՝լավերը մեկ առ մեկ հավաքում են ամանների մեջ,իսկ խոտանը դուրս գցում:Այդպես էլ կլինի այս աշխարհի վախճանը:Հրեշտակները կելնեն և չարերեին արդարների միջից կբաժանեն և կգցեն նրանց բոցավառ հնույի մեջ.այնտեղ կլինի լաց և ատամների կրճտոց:
6.Աստծո արքայությունը նման է մի սերմի,որին մի մարդ հողի մեջ ցանեց ու գնաց իր սովորական ապրուստի ետևից:Նրա ցանաց սերմերը սկսեցին բուսնել,աճել և հասկակալվել:Գալիս է հնձի ժամանակը:Արտի տերը ուղարկում է հնձվորներ՝հնձելու հասած արտը և շտեմարանելու բերքը:
Առակների մեկնաբանությունը.
Մանանեխը նման է Հիսուսի աշակերտներին,որոնք փոքր էին,սակայն իրենց առաքինություններով լցնելու էին աշխարհը:
Աստածապաշտության գաղափարը սկզբում փոքր էր,թույլ,խոցելի,և վտանգի ենթակա:Հետո այն համաշխարհային բնույթ է կրում:Նույն է եկեղեցին,որ փոքր էր,թույլ,բայց հետզհետե ծավալվելով՝աշխարհի ամենամեծ կազմակերպությունը դարձավ և իր ճյուղերի մեջ ապաստան են գտնում անհամար <<թռչուններ>>:Նույնն է և Թթխորը:
Թաքնված գանձը ավետարանի ճշմարտությունն է:Կարելի է,որ մարդիկ իրենց ունեցածը տան ՝ձեռք բերելու այդ ճշմարտությունը,որ կապվում է երկնքի երկնքի արքայության հետ:Երբ գտնվի թաքնված գանձը,մարդու հարստությունը կվերականգնվի և հավատքը հատուցում կստանա:Նույնն է նաև Գեղեցիկ Մարգարիտը:
ՈՒռկանը Քրիստոսի ավետարանն է:Երկրագնդի վրա կան թե՛ բարի և թե՛ չար մարդիկ:ՈՒռկանին մոտենում են և՛ բարի և՛ չար անհատներ.լավերը փրկության համար,վատերը՝կործանումի:
Գաղտնի Սերմի առակը ցույց է տալիս Աստծո և մարդու համագործակցությունը: Մարդը հերկում է հողը,մշակում,ցանում է սերմը,ջրում-աճեցնում և հնձում:Իսկ Աստված տալիս է իր լույսը,անձրևը,հողը և պարգևում աճ:Ճշմարտությունը մարդկանց սրտերում պաշտպանություն ունի Աստծո կողմից:

Հրեա ժողովրդի մասին Հիսուսը պատմում է <<Անպտուղ Թզենին>> առակը:Մի մարդ թզենի է տնկում և երեք տարի անց ծառը բերք չի տալիս:Հիսուսը այգեպանին ասում է,որ ծառը բերք չի տալիս,կտրիր այն,ավելորդ տեղ է զբաղեցնում:Սակայն այգեգործը խնդրում է,որ մի տարի էլ թող մնա,նրա շուրջը փորեմ,աղբ լցնեմ(պարարտացնեմ).միգուցե պտուղ տա:Եթե ո՛չ,նոր այնժամ կտրիր այն:

Սա է առակի բացատրությունը.

- Այգին՝աշխարհն է
- Թզենին՝հրեա ժողովուրդը:

Այգու տերը Աստվածն է:Պտուղը,որ Աստված ուզում էր ժողովրդից՝դա հավատքն է,հնազանդությունը,արդարությունը:Հրեաները հեռացել էին Աստծուց:Այգեգործը՝Հիսուս Քրիստոսն ,որը միջնորդ է ժողովրդի և Աստծու միջև:Աստված 40 տարի ևս համբերեց՝մինչև 70 թվականը,սակայ հրեան չապաշխարեց:Աստված նրան կտրեց և իր այգուց դուրս նետեց:

70 թվականի Իսրայելի երկիրը լցվեց արյունով և ժողովուրդը կոտորվեց ու ցրվեց ի սփյուռ աշխարհի:

Այստեղ է,որ հրեաները առ այսօր մեղադրում են նաև հայերին և մինչ օրս քենախնդրորեն են լցված մեր նկատմամբա;Պատճառը փնտրում են Տիգրան 2-րդ(Մեծի) և հետոի մեջ:Պատմությունը դա բազմիցս փաստել է.Մեծ Եղեռն,արցախյան պատերազմ և այլն:

Իհարկե առակները շատ են և մեր նպատակը չէ բոլորը մեկնաբանել:

Սակայն մի քանի առակ մեր նյութում կմեկնաբանվեն:

Մինչ հետոին անցնելը,ուզում եմ մեջբերում անել Լեռան Քարոզից,որը ստացավ Երանիների Լեռ անունը,քանի որ Լեռան քարոզը սկսվում է ինն Երանիներով: Բովանդակային,իմաստային,ուսուցողական,խրատական առումով նույնաբնույթ են,ուստի այն անենք, որպես մեջբերում.

_ Երանի՛ հոգով աղքատներին,որովհետև նրանց է երկնքի արքայությունը:

_ Երանի՛ստավորներին,որովհետև նրանք պիտի մխիթարվեն:

_ Երանի՛հեզերին,որովհետև երկիրը նրանք պիտի ժառանգեն:

_ Երանի՛նրանց,որ քաղցն ու ծարավն ունեն արդարության,որովհետև նրանք պիտի հագենան:

_ Երանի՛ողորմածներին,որովհետև նրանք ողորմություն պիտի գտնեն:

_ Երանի՛նրանց,որ սրտով մաքուր են,որովհետև նրանք Աստծուն պիտի տեսնեն:

_ Երանի՞խաղարարարներին,որովհետև նրանք Աստծո որդիներ պիտի կոչվեն:
_Երանի՞նրանց,որ հալածվում են արդարության համար,որովհետև նրանց է երկնքի արքայությունը:
_ Երանի՞ձեզ,երբ ձեզ նախատեն ու հալածենև իմ պատճառով ձեր մասին ամեն տեսակ չար խոսք՝սուտ ասեն:Ցնծացե՛ք և ուրախացե՛ք,որովհետև ձեր վարձքը շատ է երկնքում,քանի որ մարգարեներին ևս այդպես հալածեցին…
Հիսուսն իր հավատացյալներին կոչում է՝երկրի աղը և աշխարհի լույսը:Նա անում է հետևյալ բանաձևումը,որը կոչվում է<<Ոսկե Կանոն>>.
Այն ամենը,ինչ կկամենաք,որ մարդիկ ձեզ անեն,այդպես և դու՛ք արեք նրանց,որովհետև այդ իսկ են Օրենքն ու Մարգարեները:
Ինչպես տեսանք Ավետարանի ինքնատկալ հանգամանքներից մեկն էլ Հիսուսի առակներն են:Հիսուսի առակները մեծ մասամբ ժողովրդական կյանքից են,վերցված են հատուկ ժողովրդի զբաղմունքներից,դրանց տրվում է վիպական ձև,ավելի տպավորիչ,ավելի ազդեցիկ անելու համար:

- Առակներից հետո տրված են մեկնությունները՝երբեմն ընդարձակ բացատրությամբ,երբեմն համառոտ:Ժողովրդի վրա այն մեծ տպավորություն է գործում:Նա շատ էր լինում ժողովրդի բազմության մեջ և հարցերին պատասխանում էր առակներով:

Առաջին առակը,որ Հիսուսը նավից խոսում է,սերմնացանի առակն է:Ըստ իս դա առակների առակն է:
Երկրագործը,գոգն ու ձեռքը լավ սերմով լցված,ցանում է արտը:Հերկված արտի բոլոր կողմերը նույնը չեն:Քարոտ մասեր կան,որոնց վրայից արոր չի անցել,փշոտ տեղեր կան,որոնք խոպան են մնացել:Հողագործը,բուռը լիքը ցորենը,շաղ է տալիս արտի մեջ:Բոլոր
սերմերը չէ,որ պարարտ հողի մեջ են ընկնում:Կան սերմեր,որոնք քարոտ տեղերում են ընկնում,կան որ չհերկված ճանապարհների վրա,կան որ փշոտ խոպանի մեջ:Ճանապարհի վրա ընկնող սերմերը բաց են մնում,հողի մեջ չեն մտնում,թռչուններն իջնում ուտում են:
Քարոտ տեղերն ընկնողները շուտ ծլում են՝քիչ հողի ու ապառաժի տաքության պատճառով,
բայց խոր արմատ չեն տալիս ու շուտ չորանում են:
Փշոտ տեղեր ընկնողներն էլ են ծլում և չեն կարողանում շուտ աճել ու հասունանալ,քանի որ փշերն ամեն կողմից պատում են ու խեղդում ծիլերը:Լավ հողի մեջ ընկնողներն էլ հարուստ բերք չեն տալիս.հասկ կա,որ երեսուն ցորենի

հատիկ կա վրան,հասկ կա,որ վաթսուն ունի,մինչև իսկ հարյուր ցորենով հասկեր էլ են լինում:
Հիսուսն այդ առակը չի մեկնաբանում:Նա միայն ասում է <<Իմացողը թող իմանա>>:
Հիսուսը լինելով տարբեր վայրերում,տեսնելով մարդկանց աշխատանքը,դրան համապատասխան առակ էր պատմում,մեկնաբանությունը թողնելով մարդկանց:
Շատ-շատերը չէին հասկանում առակի իմաստը,անգամ իր աշակերտները:Վերջիներս
ժողովրդի հեռանալուց հետո դիմում են ուսուցչին՝Հիսուսին,որպեսզի առակի մեկնությունը լսեն:Առակներով խոսելը,թե առակ պատմելը իրականությունը վարագուրված քողարկելու ձև է:Քանի որ աշակերտները ցանկանում էին առակների խորհուրդները իմանալ,Հիսուսը սկսում է իր աշակերտներին առանձին մեկնությունը հաղորել:Հիշատակի է արժանի նաև <<Որոմների առակը>>:Այս առակն էլ Երկնքի Արքայության վերաբերյալ նյութից է:
Մի ագարակատեր ցանել է տալիս արդեն պատրաստված արտերը՝հետևելով,որ մշակները ցանեն զտված,մաքրված և մաղով անցկացրած ցորենը:Ագարակի տերն թշնամի ուներ:Նա ջանք չեր խնայում վնաս հասցնելու ագարակատիրոջը:
Օգտվելով մշակների քնելու պահից՝գաղտնի կերպով մտնում է արտը,իր հետ բերած որոմի սերմերը սփռում լավ ցորեն ցանած արտում ու աննկատ հեռանում:Որոշ ժամանակ անց արտը կանաչում է.ցորենն ու որոմը մեկտեղ աճում են:Երկուսի բողբոջներն ու տերևները միմյանցից չեն տարբերվում այնքան ժամանակ,մինչև ցողուններից սկսում են երևալ պտուղները:Այդ ժամանակ է երևում որոմի և սերմի տարբերությունը:Արտում որոմը շատ աեատ է:Մշակներն ուզում են,որ ագարակատերը հրահանգի արտը մաքրել որոմից:Բայց տերը պատասխանում է.<<Որոմի ներկայությունը չի խանգարում ցորենի հասունանալուն:Նրանք կարող են իրաի հետ մեծանալ՝առանց միմյանց խանգարելու:Բայց եթե հիմա արտը մտնենք և որոմը դուրս հանենք,վախենում եմ,որ ցորենն ու որոմը իրաի շփոթեք և որոմի հետ ցորենն էլ հանեք,քանի որ երկուսի արմատներն էլ իրար են խառնվել:Հունձի ժամանակ,երբ մանգաղն ու գերանդին արտը մտնեն և կտրեն,հնձողներին կպատվիրեմ,որ ցորենն ու որոմը միմյանցից զատեն և առանձին-առանձին կապեն՝որոմի խրձերը այրելու,ցորենի խրձերը կալսելու և ամբարելու համար:

Ագարակատերը Հիսուսն է:Ագարակը՝աշխարհն է:Ցորենի լավ սերմերը արքայության որդիներն են՝լավ մարդիկ ու Երկնից Արքայության հետևողները: Որոմ ցանողը՝սատանան:Որոմի վատ սերմը չարի որդիներն են:Հունձին աշխարհի վերջն է:Հնձողները հրեշտակներն են:Որոմն այրելու տեղը դատապարտյալների դժողքն է,իսկ ցորենը պահելու շտեմարանը՝արդարների համար պահված արքայությունը:
Այս և մի քանի առակներում ևս առկա է աշխարհի վերջում չարերեին բարիներից զատելու հանգամանքն է:
Աստվածային բարկության և արդարության նշաններն անմիջապես չեն սփռվու աշխարհի վրա,որովհետև չարերի հասած վտանգներից կարող են վնասվել նաև բարիները,քանի որ աշխարհում դեռևս խառն է նրանց կենցաղը,և նրանց բոլոր հարաբերությունները կապված են միմյանց հետ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Առակով խոսելու նպատակը Հիսուսը նաև հետևյալ կերպ է բացատրում.<<Քանի որ ժողովուրդը ինչ-որ բան տեսնում է,բայց կատարյալ չի տեսնում,ինչ-որ բան լսում է,բայց կատարյալ չի լսում,կարծում է հասկացել է ,բայց կատարելապես խելահաս չի լինում>>:
Որպես Ավետարանի մեջ հիշվող հիմնական սկզբունքներ կարելի է մեջբերել Մաթևոս Ավետարանիչի հետևյալ խոսքերը.<<Ճրագը չեն դնում գրածի տակ,ամեն բան հայտնվում է,գաղտնի բան չի մնում,ինչ չափով որ չափում եք՝դրանով եք չափվելու,ունեցածը հարգողի ունեցվածքն ավելանում է>>:
Հուսով եմ,որ կգա մի օր կդատապարտվեն չարագործները,կմաքրվի արտը որոմներից.աշխարհը կմաքրվի թալանչիներից,ագրեսորներից,նենգ ու բորենի մարդկանցից,թշնամի պետություններից,վայրենի ու դավադիր կացնահարվածողներից:Ինչպես որոմի մուտքը արտի մեջ անօրինական է,այնպես էլ դավադիր,վայրենի,բորենի ցեղերի մուտքը ուրիշների բնիկ տարածքն է անօրինական և դատապարտելի:Տա Աստված այդպիսի <<ազգերի>> արժանի դատաստանը շուտ գա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Աստվածաշունչ Մատյան

2.6,7,10,11դասարանների ՀԵՊ_ի դասագիրք

3.Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանյան-<<Համապատում>>

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Տիտղոսաթերթ-էջ 2

2.Նպատակը-էջ 3

2.Ներածություն-էջ 3,4

3.Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը-էջ 5-10

4.Եզրակացություն-էջ 11

5.Գրականություն-էջ 12